The artist Daniel Varoujan Hejinian, president and founder of Peace of Art Inc., said that "with these billboards we are honoring the memory of the victims of the Armenian Genocide, calling upon the international community to recognize the Armenian Genocide, and to condemn the perpetrators. He added, "98 years have passed but the bloody hand prints of the horrible events of 1915 stained the pages of the world history, when 1.5 million Armenians lost their lives."

The 2013 billboard depicts the bloody handprints on the words 'Armenian Genocide' over a black background. Since 1996, Mr. Hejinian has been calling for the recognition of the Armenian Genocide. In 2004 Peace of Art, Inc. began to sponsor the commemorative billboards honoring the victims and calling for the recognition of the Armenian Genocide. This year's message further calls for the condemnation of genocide.

HayastanInfo.net

AGBU and AUA to Help Spark Economic Growth in Karabakh



STEPANAKERT -- The American University of Armenia (AUA) and the Armenian General Benevolent Union (AGBU) have launched a collaborative initiative to help reignite the workforce in the Nagorno-Karabakh Republic.

AGBU and AUA issued the announcement on Wednesday, April 3 during a ribbon cutting ceremony at Stepanakert School #3, attended by Karabakh Speaker of Parliament Ashot Ghouljian, Karabakh Prime Minister Ara Harutyunyan and other government officials. Following the ceremony, AUA hosted two open house events at the school, introducing its graduate, undergraduate and extension programs to the local community.

While in Stepanakert, the AUA and AGBU delegation also visited with Nagorno-Karabakh Republic President Bako Sahakyan, who is a strong proponent for developing Karabakh's education system.

"We are fully aware of what the American University of Armenia brings to Karabakh and I can assure you that we will do everything to support you fully," said President Sahakyan. "More importantly, we will express our thanks and appreciation through our advancement as a result of your work. I believe this will be the best measure of your success."

To achieve this ambitious goal, AGBU has committed \$575,000 over five-years to support a comprehensive Continuing Education Program (CEP) in Karabakh through AUA Extension. CEP will offer six levels of English language instruction and 4 certification tracks in Strategic Management, Executive Leadership, Public Policy Planning & Administration, and Tourism & Hospitality Management.

"Education is key to sparking economic growth and AUA is excited to be working with AGBU to deploy a curriculum that helps create educa-

tional opportunities that translate into university degrees or prosperous careers in Karabakh, Armenia or the world," said AUA President Bruce Boghosian. "Through CEP, AUA Extension will provide quality, continuing education opportunities in Karabakh that enhance career paths, promote higher education, and contribute to sustainable economic development."

AUA Extension will begin offering its CEP courses at Stepanakert School #3 while AGBU builds a new cultural, educational and artistic complex to house this and other programs.

President Sahakyan noted that AGBU is an organization that is an integral part of NKR, and it was foreseeable that AGBU would initiate such a program.

"An exciting new era begins today. The AGBU NKR Campus, when completed, will expand the horizons of the people of Artsakh, provide new opportunities and contribute to the sustainable, economic development of the country," said AGBU Central Board Member Vasken Yacoubian. "The new campus is the natural continuation of AGBU's unwavering support and commitment to the stability and prosperity of Karabakh since 1988."

When construction is complete, the new AGBU NKR Campus will offer a wide range of programs for youth and adults, including training in the creative arts, media, and Internet technologies. These classes will be available to high school and college students, local businesses, entrepreneurs, and government officials.

Through the campus, CEP will offer university test preparatory courses, seminars in management, public speaking, and computer software, as well as workshops on career development, resume writing and interview skills.

Exhibition Entitled "Armenian Golgotha"

Continued from page 3

pants and considered this exhibit and similar events a monument to the innocent Armenian martyrs. Noting the young artists, the Head of Diocese expressed hope for brighter future of Armenia and Armenians.

Merujhan Shaumyan, Chairman of the Union of Armenian Painters of Georgia, and the Chairman of the Young Artist Association of Javakhk Haykazun Karagulyan presented those artists,

whose works had been recognized as the best.

Christina Bagdatsyan was recognized the youngest participant of the exhibition. Lilit Arsenyan was awarded the third place, Ani Kananyan - the second place, and Maryam Tipukhyan took the first place with her canvas "Weeping Woman". The residence of the Diocese of the Armenian Apostolic Church in Georgia awarded them with cash prizes.

The exhibition will run until April 30.

Meridianian Students' Impressive Achievements in the LA County Science Fair and AESA Armenian Olympiad



Meridianian School is proud to announce that all nine students who participated in the LA County Fair on March 21-23, 2013 won awards. Nicholas Haroutiounian, 6th grade student, was among the finalists and received the silver medal (2nd place) and monetary award in the Junior General Physics category. Nicholas will advance to the California State Fair on April 15-16, 2013. Houri Anserlian (8th), Levon Avedikian (8th), and Nikita Opel (6th) won Honorable Mention place awards. Nikita was also the recipient of the Science Achievement Award donated by the California Association of Professional Scientists. Daniel Avakian (8th), Hakob Balekyan (8th), Suzy Andakyan (6th), Vana Charkhedian (6th), and Karina Piliguian (6th) received recognition medals.

Meridianian School also participated in the Armenian Science Olympiad organized by the Armenian Engineers and Scientists of America (AESA) on March 10, 2013. Meridianian had four winners: Nicholas Haroutiounian (6th), first place medal and monetary award in the Physical Sciences category; Nanor Bedrossian (6th), first place medal and monetary award in the Life Sciences category; Daniel Avakian (8th), third place medal and monetary award in the Physical Sciences category; and Levon Avedikian (8th), Honorable Mention place medal and monetary award in the Physical Sciences category. The Meridianian School in general and the Science Department in particular is very appreciative of the \$300 awarded to the school, which will be utilized towards the purchase of science materials.


Filmmaker Eric Nazarian to Speak at NAASR May 2

BELMONT, MA -- Acclaimed filmmaker Eric Nazarian will give a lecture entitled "Shattered Screens: Can Cinema Break Taboos About the Armenian Genocide?" and show his short film *Bolis* on Thursday, May 2, 2013, at 8:00 p.m. at the National Association for Armenian Studies and Research (NAASR), 395 Concord Avenue, Belmont, MA.

Eric Nazarian's 20-minute-long film *Bolis* (2010) tells the story of an Armenian oud musician returning to Istanbul to find his grandfather's oud shop and a family heirloom that disappeared during the Armenian Genocide. *Bolis* was the recipient of the Best Short Film Award at the 14th Arpa International Film Festival in 2011. It has screened in numerous film festivals, including in Armenia, Istanbul, Sarajevo, and Dubai.

In 2012, Nazarian wrote and directed *Occupied Tears*, a 3D and 2D animation music video for Serj Tankian about children in war and the Middle East. He is a fellow of the inaugural cycle of the Fox Writers Intensive at 20th Century Fox Studios and is currently adapting Chris Bohjalian's critically acclaimed novel, *The Sandcastle Girls*, for the big screen.

Eric Nazarian is a screenwriter, filmmaker, and photojournalist. Born in Armenia, he grew up in Los Angeles, graduating with a Bachelor of Arts in Film Production from USC's School of Cinematic Arts. During his student



years, he was a freelance photojournalist covering stories in Southern California and Armenia/Nagorno-Karabakh.

In 2007, Nazarian wrote and directed *The Blue Hour*, his first feature film that premiered in competition at the 55th San Sebastian International Film Festival, going on to win six international awards. In 2008, he received the Academy of Motion Picture Arts and Sciences (AMPAS) prestigious Nicholl Fellowship in Screenwriting for his original screenplay, *Giants*. In 2010, he was invited to participate in *Do Not Forget Me Istanbul*, an omnibus film being produced as part of the European Capital of Culture's Istanbul 2010 program.

More information about this program may be had by calling 617-489-1610, faxing 617-484-1759, e-mailing hq@naasr.org, or writing to NAASR, 395 Concord Ave., Belmont, MA 02478.

ՓՐՈՖ. ՄԱՆՈՒԿ ՄԱՆՈՒԿԵԱՆ:


ՀԱՅԿԱԶԵԱՆՆ ՈՒ ԼԻԲԱՆԱՆԸ ԿՐՆԱՆ ԱՐԴԱՐԱՑԻՕՐԵՆ ՊՆԴԵԼ ՈՐ ԳԻՏԱԿԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՎ ՀՐԹԻՈՒՐՁԱԿՄԱՆ ՌԱՅԿԻՐԱՆ ԵՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՄԵՋ

Այս տարի կը գուցադիպի հրքի-
նային Միջին Արեւելի մէջ առաջին
գիտական նպատակներով արձակ-
ուած հրքիի 50-րդ տարեդարձին:
Մանուկ Մանուկեան, այդ շրջանին
մաթեմատիկի եւ քննադիտութեան
(physics) ուսուցիչ Պէյրութի Հայկազ-
եան գոլէնի մէջ, 1960 թուականէն
հրքիոններ կառուցած Գիտական
ակումբի ղեկավարն էր:



Ի յիշատակ այս գիտական միջո-
ցառումին, փրոֆեսոր Մանուկեան, որ
այժմ կը դասուանդէ Հարաւային
Ֆլորիտայի Թամպա համալսարանին
մէջ, հակիրճ պատմութիւն մը գրած է
այս ծրագրի պատմականին մասին:
Այս յոբելեանը մեծ յուզում եւ ոգե-
ւորութիւն յառաջացուցած էր Միջին
Արեւելեան տարբեր երկիրներու
մէջ: Ֆրանսելիքանեան ֆիլմարտադրիչներ վաւերագրական ֆիլմ մը
արձակած են՝ նշելու համար (այդ շրջանին տակաւին) Հայկազեան գոլէնի
Հրքիոյին Ընկերութիւնը (Haigazian College Rocket Society (HCRS): Այս
տարուան գարնան, HCRS մասնակցեցաւ Տուպայի մէջ կայացած Շարժայի
երկամեայ արուեստի փառատօնին՝ շեշտը դնելով հրքիոններու խաղաղ
օգտագործման վրայ, մինչ հրքիոններու մասին յօդուածներ հրատարակ-
ուեցան «New Scientist» ամսագրի եւ Միացեալ Թագաւորութեան «The
Guardian» թերթին մէջ, ինչպէս նաեւ, «Huffington Post»-ի մէջ. Cedar 4
յոբրոյնուած հրքիոյի մանրակերտ կրնօթիմակ մը այժմ կանգնած է
Հայկազեան համալսարանի մուտքին:

Ստորեւ կը ներկայացնենք փրոֆեսոր Մանուկ Մանուկեանի եւ անոր
կողակից ժողովի հետ մեր աշխատակցուհիներէն Նազելի Էպեան-
Նալպանտեանի կողմէ «ԱՐԱՐՍ» օրաթերթին համար կատարած
հարցազրոյցը՝ Lebanese Rocket Society փաստավաւերագրական ֆիլմի
Լիբանանեան անդրանիկ ցուցադրութեան առթիւ Պէյրութ գտնուած
միջոցին, տօնախմբելով CEDAR հրքիոններու արձակման 50-րդ ամեակը:



ՀԱՐՅՈՒՄ. _ Դուք կը հանդիսա-
նաք Հայկազեան Համալսարանի
Հրքիոյին Ընկերութեան հիմնադի-
րը եւ անոր տօնին կանգնող գլխաւոր
մղիչ ուժը: 1961-էն ի վեր մինչեւ այ-
սօր՝ վերսիջելու համար Հայկազեան
համալսարանի այս եզակի նուաճու-
մը ոչ միայն Լիբանանի կորուած-
քով, այլ ամբողջ շրջանի:


ՊԱՏԱՍԽԱՆ (Մ.Մ.)_ Կը հա-
ւատա՞ք, ես ալ զարմացած էի, երբ
փաստավաւերագրական ֆիլմի բե-
մադրիչներ եւ արտադրիչներ ժո-
ւաննա Հաճի-Թոմաս, խալիլ ժրէյշ
հետ կապ հաստատեցին եւ փա-
փաք յայտնեցին վերականգնելու
յիշողութիւններս եւ անոնց ման-
րաման պատմելու իմ յուշերս՝
Հայկազեանի Հրքիոններու մասին:

**Կը հաւատա՞ք, Հայկազեան
համալսարանի արձակած Հրքիո-
ններու թեմայով լիբանանեան փոք-
րիկ դրոշմաթուղթ մը պատճառ
եղած է, որ անոնք արձակեն խիստ
գոհացուցիչ արդիւնքով այսպիսի
հոյակապ ծրագիր մը, որ պահ մը
մեզ վերադարձուց մեր 50 տարի-
ներ առաջ երազած երազի վերա-
կենդանացման, որուն մէջ մեծ դեր
ունի նաեւ լուսանկարիչ Հերի Գուն-
տաքեան:**

**Հրքիոններու գիտութեան հան-
դէպ կիրքս սկսած է շատ կանուխ
տարիքէն, երբ ես Սուրբ ճորճ
դպրոցի ուսանող էի Երուսաղէմի
մէջ, իմ ծննդավայր հայկական
հատուածին մէջ: Իմ փայտէ զբա-
սեղանս ծածկուած էր դէպի լուսին
թռչող Հրքիոններու փորագրու-
թիւններով:**

**1959 թուականի ամրան, իմ
երրորդ տարին էր Օսթըն շրջանի
Թեքսաս համալսարանին մէջ:**

**Քլիվլենտի մէջ կ'աշխատէի
Republic Steel բեռնատար ընկե-
րութեան մէջ, երբ աշխատողներ
գործադուլ կատարեցին եւ ես մի-
նակ մնացի այդ աշխատանքին
մէջ: Ահաւասիկ այդտեղ որ ես
նախագծեցի եւ շինեցի իմ առաջին**



անոնց խրախուսել՝ շարունակելու
իրենց ասպարէզը մաթեմատիքա-
յի, ճարտարագիտութեան եւ գի-
տութեան ճիւղերով: Ես ի սկզբանէ
շատ յստակօրէն շեշտադրեցի, որ
նախագիծը ուղեւորական նպատակ-
ներով չէ, որքան ուղեւորութիւն
մը Հրքիոյին գիտութեան գաղտ-
նիքներուն ընդմէջէն: Անդամներու
հետ հանդիպումներու ընթացքին
մենք պարբերաբար կը քննարկե-
ինք Հրքիոյին ձեւաւորումն ու
թռիչքներու մաթեմատիքան:

Յաջորդ քայլը պէտք է ըլլար
անշուշտ Հրքիո շինելը, Հրքիոյ
յին վառելիքով: Սակայն նկատի
առնելով Հրքիոյին վառելիքի
վտանգները, մեր նախնական փոր-
ձերը կատարեցինք գոլէճէն շատ
հեռու՝ Հրայր Քէլէշեանի ընտանի-
քին պատկանող հողատարածքի մը
վրայ: Մի քանի անցաջող փորձերէ
ետք մենք կատարելագործեցինք
Հրքիոյին վառելիքի գործածու-
թիւնը եւ օդ արձակեցինք փոքրիկ
45 սմ. երկարութեամբ Հրքիո մը,
որ... ինկաւ չունական եկեղեցոյ մը
շրջափակէն ներս, մեծ զարմանք
պատճառելով եկեղեցոյ մէջ
գտնուող հաւատացեալներուն:

Կրնամ ըսել, որ Հայկազեան
գոլէճի մէջ յուզումները վարակիչ
էր: Ապրիլ 1961-ին, մենք պատ-
րաստած էինք արդէն 1,75-մետր-
նոց Հրքիո մը եւ հրաւիրած ուսա-
նողական ամբողջ կազմը՝ ականա-
տես ըլլալով արձակման: Մենք
ընտրեցինք Այն Սատէի շրջանի
Քչակի տարածքը այս ցուցադրու-
թեան համար: Հակառակ յաջողու-
թեամբ իրականացած Հրքիոյի, որ
հասած էր մօտ 1000 մետր բարձ-
րութեան վրայ, սակայն մեր նախ-
նական ուղղորդիչը Հրքիոյ ար-
ձակեց մեր նախատեսածին հակա-
ռակ ուղղութեամբ: Այս դէպքն է,
որ ստիպեց լիբանանեան կառավա-
րութեան՝ վերահսկելու մեկնարկի
վայրերը: 1961-ի Մայիսին, նմա-
նատիպ երկրորդ Հրքիո մը արձա-
կեցինք Սանինին: Ասիկա արդէն
հատեց 2,300 մետրի սահմանները:

Բաղդատականի համար նշեմ,
որ 1961ի Յուլիսին էր, որ Իսրայէլ
արձակեց իր առաջին Հրքիոյը,
հետեւաբար Հայկազեան գոլէճն ու
Լիբանանը ընդհանրապէս կրնան
արդարացիօրէն պնդել, որ առա-
ջինն են, որոնք Միջին Արեւելքի
մէջ սկսած են Հրքիոյին արձա-
կումներու անշուշտ գիտական նկա-
տաւորւմներով:

Ես շատ սպաւորուած էի HCRS-ի
անդամ ուսանողներու քրտնաջան
աշխատանքով եւ ցուցաբերած նուր-
բութիւնով: Հայկազեանի բազմաթիւ

այլ ուսանողներ նոյնպէս շջակցե-
ցան մեզի, խառնելով Հրքիոյին
վառելիքի բաղադրիչներ եւ ներ-
կայ գտնուելով արձակման ձեռ-
նարկներուն:

Այս յաջողութիւններէն ետք
որոշեցի փորձարկել բազմափուլա-
յին Հրքիոններ: Մենք մշակեցինք
համակարգ մը, որուն միջոցաւ
թռիչքի ընթացքին պէտք էր
առանձնանային Հրքիոյի առաջին
եւ երկրորդ հատուածները:

1961-ի Սեպտեմբերին, լիբա-
նանեան բանակի հրամանատար
Ուեհպէի ներկայութեամբ եւ հսկո-
ղութեան տակ մենք յաջողութեամբ
արձակեցինք երկու հատուածով՝
2,85 մետրնոց Հրքիո մը, որ
կոչուեցաւ Cedar 2: Առաջին հատ-
ուածը ունէր 10 սմ. տրամագիծ,
խակ երկրորդը՝ 7.5 սմ. տրամագիծ:
Հրքիոյը հասաւ շուրջ 2500 մետր
բարձրութեան:

1961 թ. Օգոստոսին, Լիբանա-
նի նախագահ Ֆուատ Շհեպ HCRS-ի
անդամները հանդիպումի հրաւի-
րեց իր մօտ եւ պաշտօնական ըն-
դունելութեան մը ընթացքին շնոր-
հաւորեց մեզ: Յետագային, Լիբա-
նան հրապարակեց դրոշմաթուղթ
մը, ի յիշատակ CEDAR Հրքիոննե-
րու շարքի արձակումներուն:

Նախարար էմիլ Պուսթանի
իր կարգին շատ մեծ ղեկավարութիւն
ցուցաբերեց մեր նախագիծին, իսկ
իշխանութիւնը մեզ առաջարկեց
ֆինանսական օգնութիւն, ինչպէս
նաեւ բանակի արհեստանոցը՝
Հրքիոններու կառուցումը շարու-
նակելու համար:

Մեր փորձարկումները եւ գոր-
ծունեւորութեան ընթացքը զրաւեցին
լիբանանեան եւ թէ՛ օտար լրատ-
ուամիջոցներու ուշադրութիւնը,
այդ շարքին նաեւ յօդուածներ
ամերիկեան թերթերու մէջ:

Պատկերասփիւռային եւ ձայ-
նասփիւռային հարցազրոյցներէն
ետք բազմաթիւ դեսպանութիւն-
ներ հետաքրքրութիւն ցուցաբերե-
ցին մեր աշխատանքներուն, մինչ
մեզ այցելեցին Ա.Մ.Ն.ի եւ Խորհր-
դային Միութեան մշակութային
կցորդներ եւ ես հանդիպում ունե-
ցայ նաեւ Ա.Մ.Ն.ի հիւպատոս Փոր-
թրի հետ: Թէեւ ստոյգ չեմ կրցած
փաստել, որ օտարերկրեայ գործա-
կալներ մեզ կը դիտարկէին, սակայն
քանի մը անգամ նկատած եմ, որ
զրաւեցանք մեր վրայ գտնուած նշում-
ներու թուղթերս խառնուած են:

1962ի ամրան որոշեցի վերա-
դառնալ Թեքսասի համալսարան՝
շարունակելու ուսումնառութիւնը:
Մինչ այդ

ԶՈՒԱՐԹՆՈՑ ՏԱՃԱՐԻՆ ՍԷՋ

«Այս տաճարին մէջ, ո՛վ Տէր, աղօթեցի՞նք անո՞նք որ Իրենց ցաւի ծուխին խառն՝ հրնուանքի բո՛ց մ՛ուռնէին»:...

Վ. ԹԵՔԷՆԱՆ

ԱՐԱՄ ՍԵՓԵԹՅԱՆ

«**ԶԱՅՆ ԵՒ ԼՈՅՍ**»ը արդի ժամանակներու գեղարուեստական բարձրագոյն մակարդակովը մեզի կը պարզեւէ պահեր ու խոհեր: Հոգեկան այդ վայելքն է, որ կը յամենայ ինձմէ ներս, անոր կրկնօրինակին մէջ գտնելով շարունակութիւնը գեղարուեստական այդ պահերուն:

Յաճախ, այդ մտածումն իսկ, որմէ երբ կ'այցուիմ ենթագիտակցաբար, ա՛յդ «շնորհ»ը կ'ընդունիմ մեծագոյն շնորհակալութեամբ:

Այն ինչ որ «բուրգեր»ը պատմեցին ինձի իրենց անցեալի հրաշալիքները, **ԶԱՅՆԻ** եւ **ԼՈՅՍԻ**

վերացուցիչ գեղեցկութեամբ, ակամայ եւ անզգալաբար, իբրեւ

նի «Եկեղեցին Հայկական»ը սկսաւ գրուիլ Գեղարդայ վանքին ու Զուարթնոցի տաճարին աւերակներուն ուղղուած իր իմաստուն հայեացքին ու սեւեռումին ընթացքին... Իր «Մէկ- Հատիկ»ին անվերադարձ կորուստէն առաջ... երբ կ'աղօթէր այնտեղ ծնրադիր ու թախծադէմ այդ փլած տաճարին մէջ:

Զուարթնոցի խորհուրդը, անիմանալի՝ ապրում մը՝ որ լեզու տուաւ դարերու մունջ պատմութեան: Վերականգնեց Եկեղեցին Հայկականը իր փրատակներէն, կաթողիկէն ստացաւ իր երկնասլաց տեսքը, որուն պատերը ցնցուեցան վերստին, բայց այս անգամ՝ մեր աղօթքներէն ալեխուով: Յնցուեցա՛ւ նաեւ Աստուած, երբ բանաս-



Զուարթնոցի տաճարի (7-րդ դար) աւերակները

մօտենայ գլխահակ՝ այդ սկիհէն հաղորդուելու մեր անցեալին հետ, եւ ան, մտածելով նաեւ մեծ ծովանկարիչին «Իններորդ ալիք»ին մասին, բանաստեղծին ալեկոծ ծովուն դիմաց գտնուող խաղաղ նաւահանգիստն է, որ պիտի նկատէ, «Յուրտ գիշերին՝ հուր եւ բոց», ու քիչ մը հեռուն պիտի երեւին շարականի գետին մօտ շուշանները՝ որ կը ծաղկին, ինչպէս՝ մեր հարսնացուներն ապագայ:

Ու հարց կու տամ մտովի բոլոր այն քար ու քանդակներուն, ցո՛յց տալ մեզի դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբաները: Թող մեր մտածումները սուրան աջ եւ անեակ, առնեն ձեւ ու մարմին, հագնին զրահանդերձ փայլուն, ըլլան խաչերը՝ դաշո՛յն, իսկ գանգակները բոմբիւն՝ իբրեւ երգը յաղթութեան, դառնայ լսելի մեր Անլուելի Զանգակատունէն: Յովհաննէս Այվազովսկիի «Իններորդ

ալիքը» Զուարթնոցի տաճարին համալիրը եղաւ ուխտատեղի մտածումներուս: Քար ու քարայր վերածուեցան բարձր բերդին հաւատքի եւ վարագոյրը բանուած՝ եղաւ հանդիսարանը մեր ցեղային դարաւոր երազներուն: Քար ու քարայր, ժայռաբեկորներու վրայ եղան քերթուածներ՝ քանդակուած իբրեւ պատգամ մեր սերունդներուն ապագայ:

Չայն եւ լոյս վերամիացած, քերթուածին տուին յաւերժութիւնը խորքին, գեղեցիկ ու վսեմ:

Հեռաւոր տարիներու խորքէն, կը լսեմ բանաստեղծին Լ՛ՐԼԸ Չայնը, բայց խօսուն ու կենդանի:

Ու Զուարթնոց տաճարը կը վերածուի կրկին բանաստեղծութեան, կ'ըլլայ Եկեղեցին Հայկական ու կը մնայ մեր ժողովուրդին իբրեւ փառաւոր ու դարաւոր՝ ԲԱՐՁՐ ԲԵՐԴԵՆ ՀԱԻԱՏՔԻՆ:



Գեղարդի վանքը

անանուն չոյց եւ ապրում

խուժեցին ինձմէ ներս, երբ կանգնած Զուարթնոցի Տաճարէն ներս, աւերակներու մօտ իմ նորաւեր հոգիովս, երեւակայեցի մեր Բանաստեղծը, որ 1911ին, իբրեւ ուխտաւոր այցի եկաւ այստեղ, եւ աւերակ տաճարին մէջ մտովի՝ երկնեց տողերը իր «Զուարթնոց»ին: ... «Այս տաճարին մէջ, ո՛վ Տէր...» ես ալ անաւասիկ կը կանգնիմ լուռ եւ ամփոփ, ու կը մտածեմ անոր հոգիին մասին՝ որ... դողաց վասն մեր եւ բազմաց:

Զուարթնոցի աւերակներու «Համալիր»ին մէջ կը գտնեմ ես իմ էութիւնս: Անոր համահասարակ՝ ժայռանիստ Գեղարդն է, որ... պարզ ու խորունկ, մութ ու լոյս քարայր մըն է ընդարձակ, եւ որ եղեր էր ներշնչարանը Բանաստեղծին, երբ իր այցէն տասնեակ տարիներ ետք կը յօրինէր ան տողերը իր «Եկեղեցին Հայկական» նկարչագեղ անկրկնելի քերթուածին:

Կը շարունակեմ մնալ Զուարթնոցի աւերակներու շրջագիծէն ներս: Իւրաքանչիւր քար ու քանդակին Զուարթնոցի տաճարը «վերակառուցուած» մէջ անոր, կը զգամ ջերմութիւնը մեր պապերուն մաքուր Թորոս Թորամանեանի կողմէ քրտինքին հետ, նաեւ իր ուղիւր բոսոր արեան, որ շողախեր էր հիմքերը՝ բարձր բերդին մեր հաւատքին: Ու կը մտածեմ հրաշալի այն պահին մասին, երբ քերթուածը կը յօրինուի բանաստեղծին միտքին մէջ, ու կը հաւատամ ի՛մ իսկ ենթադրութեանս, որ Թէքէեա-

տեղծին ճենճերող սիրտը, ի տես մեր ժողովուրդին ապրած «Կէս Գիշեր»ին, կենդանի նահատակութեանը մեր կոմիտաս-աղամահդ երգին, լսեց բանաստեղծին բողբոջը որ կ'ըսէր ուժգին՝ «Մեզ դժոխք դրկէ անգամ մ'ալ»:...

Ես այս քերթուածէն քանի մը տող արտասանեցի նաեւ ծնրադիր՝ Զուարթնոց տաճարին աւերակներու վրայ:

Սակայն, իրօ՞ք Թէքէեանին գրիչը կը ստորագրէր գայն, երբ իր հոգեկան խաղաղ մէկ պահուն, ան մեզի կը յանձնէր դարերուն, կը յանձնէր նկարչագեղ այն՝ «Վարագոյրը բանուած, որուն ետեւ սկիհին մէջ կ'իջնէր ի՛նքը՝ Աստուած, որուն առջեւ գլխահակ կու գար իմ ազգս ամբողջ, որպէսզի հաղորդուէր անցեալին հաց ու գինիով կենսառողջ»:

Պաստաւը աւարտած է: Այն ինչ որ արտագրեցի ես ալ՝ աչքս գոց կը տեսնէի ծննդավայրը հոգիիս, ու պահ մը կ'երեւակայէի Զուարթնոցի համալիրը, որ ըլլար այն մնայուն թանգարանը, բաց երկնքի տակ, ինչ որ է՛, անտարակոյս, ուր մեծադիր ժայռի մը վրայ փորագրուէին կամ քանդակուէին Թէքէեանի «Եկեղեցին Հայկական» այս քերթուածին բոլոր տողերը, ամբողջը եւ առանց մեկնաբանութեան: Տարբեր հարց, եթէ արուեստագէտ այլ հոգի մը, եղբայր ու հաւասարապատիւ, կարենար որմնանկարով մը խորհրդանշել հմայքը այս քերթուածին: Վստահ եմ, մեզի պէս ան ալ պիտի

MOTHER'S DAY
Dinner Dance

Presented by
Homenmen Ladies Auxiliary

Saturday, May 11, 2013
Garo Soghanalian Hall • 8:30 p.m.
1060 N. Allen Ave., Pasadena

Donation \$35.00

For reservations, please contact:
Lena 626-485-6434 or Karine 818-324-0574

ՆՈՐ ԳԻՐՔԵՐՈՒ ԴՅՆ
 «ԻՆՉ Է ԳՐՈՒԵԼ ԻՐԱՆՈՒՄ ԶԱՅՈՑ
 ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ»
 (ՅԵՂԻՆԱԿ՝ ԱՐՄԻՆԷ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ-ԳՈՒՆՏԱԳՃԵԱՆ)

Ա. ՄԱՀՄԵՐԷՅԵԱՆ

Այն օրերուն, երբ 2012 տարին կը պատրաստուէր մայր մտնել, Երեւանի «Լուսաբաց» հրատարակչատունէն լոյս տեսաւ Արմինէ Կարապետեան-Գուստազեանի «Ինչ է Գրուել Իրանում Հայոց Ցեղասպանութեան Տարիներին» հատորը, որ ուշագրաւ հրատարակութիւն մըն է եւ նոր ներդրում մը՝ Հայ Դատի աշխատանքներու ծիրին մէջ։



Մասնագիտութեամբ քիմիագէտ, սակայն հոգիով ու խորքով մեզ տագնապեցնող հարցերու հետամուտ Արմինէ Գուստազեանը վերջին տարիներուն ձեռնարկած է ուսումնասիրական աշխատանքի, եւ ահա, ընթերցողին ու Ցեղասպանութեան ծախքերով հետաքրքիրներուն կը ներկայացնէ եռալեզու հատոր մը: Նախորդ գործը լուսարձակի տակ առած էր պատմական պայմաններու բերումով քիչ քննարկուած վէճը մը՝ ստալինեան տարիներուն հայրենադարձներուն վիճակուած տառապանքները. «Հայրենադարձների Բռնաճնշումները Ստալինեան ժամանակաշրջանում» հատորը (2010) վաւերագիրներու պեղումով ու մէկտեղումով կազմուած գործ մըն էր. երկրորդը լուսարձակը կը կեդրոնացնէ Ցեղասպանութեան մասին վկայութիւններու վրայ: Խորագիրէն իսկ կարելի է հետեւցնել, թէ հատորը կը բովանդակէ մամուլէն քաղուած պատմական փաստեր, ինչպէս նաեւ յուշագրական գրութիւններէ քաղուած բաժիններ:

Հատորը, որ կը տարածուի 260 էջերու եւ յաւելուել էջի մը վրայ, բաժնուած է երեք գլխավոր մասերու, որոնցմէ իւրաքանչիւրը քաղուած նիւթերը կը ներկայացնէ հայերէնով, անգլերէնով ու պարսկերէնով:

Հեղինակը հատորը կը բանայ բացատրական յառաջաբանով մը (հայերէն, անգլերէն ու պարսկերէն), ուր լուսաբանութիւն կու տայ հատորի արարման պատճառներուն մասին: Այնուհետեւ, քաղուած քերտէրը կը մարմնակերպէր երկու գլխավոր բաժիններով. առաջին բաժինին մէջ տեղ գտած են իրանեան մամուլէն քաղուած եւ առաւելաբար օրուան լուրերէն մէջբերուած գրութիւններ: Այս տեղեկութիւնները չեն սահմանափակուած նոյնիսկ Ցեղասպանութեան տարիներով, այլ կը տարածուին 1904էն մինչեւ 1920 տարիները: Տարբեր օրաթերթերու մէջ տրուած լրատուական տեղեկութիւնները վկայութիւններ են՝ կազմակերպուած ու միտումնաւոր ջարդերու, հալածանքներու եւ բռնի տեղահանութեան շարունակական ջարդերու մասին:

Եռալեզու ըլլալու հանգամանքը այս հրատարակութեան կու տայ միաժամանակ այս երեք լեզուներուն ծանօթ ընթերցողներու լայն զանգուածի մը համար լուսարձակը մը: 260րդ էջէն ետք կատարուած մէկ էջնոց յաւելումով, հեղինակը կարճ բացատրութիւն մը կու տայ, թէ ինչու Ցեղասպանութեան մէջ թուրքիոյ պետութեան պատասխանատուութիւնը պէտք է նուազագոյն չափով նօսրացումի ենթարկել՝ ոճիւրի մէջ անոր իրեն մեղսակից յառաջ բերելով գերմանները, անգլիացիներն ու հրեաները: Լուսարձակի տակ կը բերուի այն իրականութիւնը, որ հայութեան հայրենիքին բռնագրաւումն ու ժողովուրդին բնաջնջումը հետապնդող թուրքիան 1915էն շատ առաջ որդեգրած էր հակահայ քաղաքականութիւն:

ՓՐՈՖ. ՏԱՆԸՆՏ ՄԻԼՐ ՊԱՐԾԱՆՔ ԶԱՅԵՐՈՒՄ
 ԹԱՆԿԱԳԻՆ ԶԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ ԶԱՅՈՑ
 ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԱՅ ԴԱՏԻ

Ա.Զ.ՆԻՒՄԱՀԱԿԻ ՊՐՈՒՆՍՈՒՋԵԱՆ

Բացառիկ եւ աննախընթաց դասախօսութիւն մը՝ Հայկական Ցեղասպանութեան 98րդ ոգեկոչման սեմին: Քրեանթա Հովիտի Հայց Առաք. Ս. Եկեղեցւոյ Դաստիարակչական Ցանձնախումբի նախաձեռնութեամբ, Կիրակի, Մարտ 10, 2013ին, ժամը 1:00ին «Կրօնքի Դերը եւ Ազդեցութիւնը Բուժելու՝ Ցեղասպանութենէն Վերապրողներուն» անգլերէն լեզուով դասախօսութեան տպաւորիչ նիւթն էր Փրոֆ. Տանընտ Միլըրի հարաւային Փալիֆօրնիոյ Համալսարանի Կրօնքի եւ Քաղաքային Մշակոյթի Ամպիոնի Տնօրէնին:



Փրոֆ. Միլըր, բժախնդրութեամբ վեր առաւ Հայկական Ցեղասպանութիւնը եւ կրօնքի կարեւորութիւնը, կեդրոնանալով յատկապէս կրօնքի դերին եւ ազդեցութեան՝ որպէս բուժում վերապրողներուն: Մասնաւորապէս կեդրոնացաւ թրոմայի մասին (Trauma: Post Trauma Stress Disorder, PTSD) խանգարում՝ յուսահատ եւ ուժգին աղետէ մը ետք: Այս վիճակը կը յաջորդէ Ցեղասպանութենէն վերապրողներուն՝ որոնք իրենց հաւատքը կը կորսնցնեն կրօնքի՝ թէ Աստուած ո՛ւր էր, ցեղասպանութիւն, կրօնք եւ բուժում, բարդ նիւթ մըն է եւ վերապրողները հարց կու տան կրօնքի դրական թէ ժխտական գոյութեան իրողութեան տուեալները:

Սեւ լու գեղասպանութեան եւ տեղահանութեան մասին: Նոյնիսկ ոչ հայ միսիոնարներ վտանգի են թարկուած են եւ կորսնցուցած իրենց կեանքը: Աղէտեալներ նաեւ ապաստանեցան թուրք ընտանիքներու մօտ եւ հետեւաբար կորսնցուցին հայ լեզուն եւ քրիստոնէութիւնը: 20րդ դարու 3րդ ցեղասպանութիւնը տեղի ունեցած է Րուանտայի մէջ 1994ին՝ 100 օր տեւողութեամբ, 800,000 թուցիներ, հուլիսի ցեղախումբի զոհերը եղած են: Յաւալին այն է թէ 800,000 զոհերուն 50% սպաննուած կամ հրկիզուած են եկեղեցիներու մէջ, զարմանալի երեւոյթ է թէ երկու կողմերն ալ դժբախտաբար քրիստոնէաներ էին, այդ պատճառաբանութեամբ թէ թուցիները լքուած են Աստուծոյ կողմէ եւ անշուշտ հետեւաբար աներեւակայելի տառապողներ եղած են թրոմայով:

Որովհետեւ վերապրողներ ականատես եղան դառն եւ անխիղճ ոճիւրներու, տառապեցան անհելի եւ գգայացուց ճշգրտապէս վիճակներ... սպանդ, չարչարանք, առեւանգում եւ հետեւաբար այս վիճակները անմոռանալի հետքերով իրենց աւօրեայ հոգեվիճակին անբաժանելի մաս կազմեցին: «Survivors: an Oral History of the Armenian Genocide, with Lorna Touryan Miller, University of California Press, 1993» գրքի բոլոր 100 վերապրողներուն հարցազրոյցները կը բնորոշուին սոսկալի յուզումով, անսահման վախով եւ բարկութեամբ, մերժելով եւ փախուստ տալով նոյնիսկ յետագարձ ակնարկով մը լինել անցեալի անտանելի դէպքերը երբ մանաւանդ կիներ կորսնցուցած էին իրենց պատիւն ու արժանապատուութիւնը... եւ վերջիչելով ահաւեր իր անցուղիները նաեւ իրենց հարգատենքը կորուստով, վարակիչ հիւանդութիւններով եւ սովի հետեւանքով: Trauma-ն անկասկած փոխանցուած է նաեւ երկրորդ եւ երրորդ սերունդներու, բայց ժամանակը ունեցած է իր ազդեցութիւնը՝ որոշ չափով նուազեցնելով իրենց տառապանքը՝ բուժումի առաջնորդելով:

2001ին փրոֆ. Միլըր իր տիկնոջ Լորնա Դուրեան Միլըրի հետ հրատարակած են Համազումարի Րուանտայի մէջ, կազմակերպող պատասխանատուն հարց տուած է տիկ. Լ. Դ. Միլըրին իր ընտանիքի վերապրողներուն մասին, ուրեմն տիկ. Միլըրի մօր ընտանիքին միայն կէսը վերապրած են իսկ հայրը եւ հօրաքոյրը վերապրած... Իմանալով Րուանտայի համազումարի մասին թրքական իշխանութիւնները ձգտած են խեղաթիւրել Համազումարի որոշումները, իրողութիւնները եւ արդիւնքները:

Տեղահանութենէն անմիջապէս ետք բողոքական միսիոնարներ 200 որբանոց հաստատած են թուրքիոյ տարածքին բուժումի, նպաստի եւ օգնութեան ջանքերով՝ տեղահանուած մանուկներու, պատանիներու, այրիներու եւ անտունիներու: Իրենց նպատակն էր հաստատ եւ հանգիստ կեանք ապահովել աղէտեալներուն ներշնչելով հաւատք եւ յոյս:

Փառաւոր եւ շատ հետաքրքրական բոլորիս յուզող դասախօսութենէն ետք բեմ հրաւիրուեցան խօսելու Արտա եւ Տօրիս Մելքոն-Վանքերով:

Ապա որբանոցները կը փոխադրուին Լիբանան եւ Արարի: Թուրքիոյ մէջ տեղահանուողներ արգիլուեցան արտադրուելու, խօսելու ցեղասպանութեան մասին:

Մեծածառակներու եւ մանուկներու Բայրոզիաքոյի բոժում: Գլխացու, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ջարդեր: Բնաշարժի վթարի հետեւեցող պատճառով վնասուածներու բուժում: Չոր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

Dr. Missak Ekmekdjian
Chiropractor

Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծածառակներու եւ մանուկներու Բայրոզիաքոյի բոժում: Գլխացու, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ջարդեր: Բնաշարժի վթարի հետեւեցող պատճառով վնասուածներու բուժում:

ԿԻՆԵՐՈՒՆ ՊԱՂՈՒԹԵԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ ԶԱՐԳԱՑԱԾ ԿՈՂԱԿԻՑԻ ԵՒ ՀՈԳԵԲՈՅԺԻՆ ՄՕՏ ԿԸ ԳՏՆՈՒԻ

Կարգ մը կիններ սեռաչին յարաբերութեան նկատմամբ բացասական հակազդեցութեան կը տառապին: Անոնց եւ հաճոյքի զգացումներն միջեւ կը կանգնի հաստ պատ մը, զոր շրջանցելը դժուար կ'ըլլայ: Անոնց մարմինները կը խորթանան հաճոյքին, սեռային յարաբերութեան բոլոր հանգրուաններուն ընթացքին:

Անոնք, հետեւաբար, գիտականօրէն դասուած են «պաղ» երուշարքին: Բժիշկներ այս պաղութիւնը մեծամասնութեան մօտ կը տեսնեն որպէս դաստիարակչական-հոգեկան կառուցուածքի արդիւնք, մինչ նուազ տոկոսով կիներու պարագային այդ մէկը օրկանական հարց կրնայ ըլլալ:

Պաղութիւնը հիւանդագին վիճակ մըն է, մանաւանդ կիններուն մօտ, որոնք կ'ապրին «պաղ» աշխարհի մը մէջ եւ իրենք գիրենք անհոգ կը գտնեն, իրենց զգացումներուն վրայ կղպած, որքան ալ ազնիւ, քաջալերական եւ զբաւելի ըլլայ կողակիցին վերաբերմունքը:

Ի՞նչ է պաղութիւնը: Ընդհանուր նկարագրութեան մէջ այդ կը նշանակէ սեռային յարաբերութեան հանդէպ փափաքի ամբողջական չզոյւլութիւն: Բժիշկներ, այս վիճակէ տառապող կնկան մօտ առաջին հերթին կը փորձեն յայտնաբերել, եթէ անոր ունեցած յարաբերութիւնը կ'ընդգրկէ մարմնային բրտութիւն, մարդոց ներկայութեան արհամարհանքներ, հոգեկան վնասներ, անհոգութիւն, կամ ի պահանջեալ հարկին հոգատարութիւնը չցոյց տալը: Երբ բժիշկները այս հարցումներէն որեւէ մէկը չեն գտներ որպէս պատճառ կնկան պաղ վիճակին, այլ պատճառներ կը փնտռեն, ինչպէս օրինակ համար, եթէ երբէք հեռատեսիլէն դիտած մտերմիկ տեսարան մը կամ խրախճանքի մը ընթացքին սիրային խօսակցութիւն մը որեւէ ցանկութիւն կը յառաջացնէ՞ իր մօտ:

Եթէ այս հարցումներուն ալ բացասական պատասխաններ առնեն, բժիշկները կը վստահանան, որ այս կնկան քով ցանկութիւնը գոյութիւն չունի: Այս է պարզապէս պաղութեան տառապող կարգ մը կիներու, մինչ ուրիշներ ցանկութիւնը կ'ունենան սեռային յարաբերութեան, սակայն ա՛յդ պահուն անոնց մօտ կ'անհետանայ զգացումը:

Այս վիճակին պատճառները կարելի է բաժնել երկուքի՝ օրկանական հիւանդագին եւ հոգեբանական դաստիարակչական: Բազմաթիւ բժիշկներ կ'եզրակացնեն, որ պաղութեան պատճառը հոգեբանական է: Մեր արեւելեան շրջանակներուն մէջ չարաշահումը եւ աղջիկներուն հանդէպ կատարուած մօտեցումը գլխաւոր պատճառներ են, որոնք իրենց բարդ հետքը կը ձգեն աղջկան վրայ հասունութեան շրջանին, եւ որոնք կը դրսեւորուին սեռային յարաբերութեան եւ ընդհանուր առմամբ տղամարդոց հանդէպ վախով եւ հակակրանքով:

Հոգեբանական այլ պատճառներէն են նաեւ կրօնական ըմբռնումը եւ մանկութեան ընթացքին սխալ դաստիարակութիւնը, որոնք կը կեդրոնանան մեղքի եւ ամօթի հասկացողութիւններուն վրայ: Դժբախտաբար, մեր շրջանակներուն մէջ աղջիկ զաւակը կը մեծցնեն սեռային յարաբերութեան հան-

դէպ բարդութի հիման վրայ, սակայն յանկարծ իր պակիին գիշերը ան ինքզինք կը գտնէ այդ արարքը կատարելու ստիպուած: Եւ անկասկած, որ այս իրականութիւնը կ'աւելցնէ անոր բարդութիւնը սեռային յարաբերութեան հանդէպ:

Ծանօթացման եւ նշանտուքի հանգրուանները կարեւոր են, երբ ասպագայի կողակիցները առիթ կ'ունենան անկեղծօրէն, գիտական եւ զգացական առումներով խօսելու իրենց կատարելիք սեռային յարաբերութեան նիւթին մասին: Այս հանգրուանը միջոց մըն է իրար մօտենալու եւ ամէկտուտութեան գործօնը վերացնելու, ինչպէս նաեւ մարդկայնավայել մօտեցումով իրարու հանդէպ ցանկութիւն յառաջացնելու շրջանն է այդ: Այս մէկը պէտք է անպայման պատահի նախքան մէկ երդիքի տակ ապրելու մեծ քայլին ձեռնարկելը:

Գանկութեան տեսակէտէն, կիներ մի քանի տեսակ են. կան, որոնք բարձր ցանկութիւն կը վայելեն, ուրիշներ՝ միջին չափի, իսկ այլ տեսակ մը՝ որոնց մօտ ցանկութիւնը բոլորովին անգոյ է: Առաջին եւ երրորդ տեսակի պատկանողներուն տոկոսը քիչ է:

Գիտակից ամուսին մը օգտակար կը դառնայ իր կնկան՝ ձեռքբերուելու պաղութեան: Տարբերութիւնը շատ մեծ է անգիտակ եւ անփորձ կողակիցի մը, որ մի քանի վայրկեանի մէջ իր հաճոյքը կ'առնէ եւ միւս կողմ կը դառնայ խորքուն քնասլու, եւ ուրիշի մը միջեւ, որ իր կնկան աչքերուն մէջ տեսած զգացումները կ'ապրի: Այս երկրորդ տեսակի գիտակից կողակիցին հետ, ինչպէս նաեւ սեռային հոգեբանի օգնութեամբ վստահ, որ կարելի պիտի ըլլայ գոհացողիչ արդիւնքներու հասնիլ:

ԿԱՆԱՅԷ ԱԲԵԼԻ ԳՐԱԻԻՉ ԵՆ 30 ՏԱՐԵԿԱՆԻՆ, ՏՂԱՄԱՐԴԻԿ՝ 34-ԻՆ

Հանրայայտ «Allure» ամսագիրը Միացեալ Նահանգներու մէջ 2,000 բնակիչներ ընդգրկող ուսումնասիրութիւն մը կատարած է, որուն արդիւնքով պարզուած է, թէ ո՞ր տարիքին կանայք եւ տղամարդիկ իրենք իրենց ակելի գրաւիչ կը համարեն: Ինչպէս կը նշէ «The Telegraph»-ը, կանանց պարագային այդ տարիքը 30-ն է, իսկ տղամարդոց պարագային՝ 34-ը:

Հարցախոյզին մասնակցած կանայք նշած են, որ կանանց ամէնէն զբաւելի տարիքը 30-ն է, 41 տարեկանին կը զգացուին ծերութեան առաջին նշանները, 53 տարեկանին

կանայք կը դադրին իրենց ցանկալարոց համարելէ, իսկ 55-ին արդէն ծեր կը զգան:

Տղամարդոց պարագային պատկերը հետեւեալն է. «Ճակման» շրջանը 34 տարեկանն է, ծերացման առաջին նշանները ի յայտ կու գան 41 տարեկանին, ցանկալարոց վիճակի անկումը՝ 53-ին, եւ ծերութեան զգացողութիւնը՝ 55 տարեկանին:

Հարցումներուն 5%-ը խոստովանած է, որ երիտասարդ երեւալու նպատակով արդէն դիմած է գեղեցկագիտական վիրաբուժութեան օգնութեան:

ԳԻՇԵՐՈՒԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԵՐԸ ԿՐՆԱՆ ԱՂԴԵԼ ՈՒՂԵՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԵՒ ՖԻԶԻԲԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Մեր կենցաղը եւ սովորութիւնները, ինչպէս նաեւ մեր սննդականոնը մեծ դեր ունին մեր հոգեկան առողջութեան վրայ, իսկ հոգեկան առողջութիւնը իր կարգին կրնայ ազդել ֆիզիքական առողջութեան վրայ: Որքան առողջ ըլլանք, հոգեպէս այնքան ակելի առողջ կ'ըլլայ մեր մարմինը: Սակայն որքան ընկճուած, ճնշուած կամ ջղային ըլլանք, այնքան վնաս կրնանք հասցնել մեր մարմնին: Երբեմն սակայն, մարմնի վատառողջութիւնը կրնայ իր հետքերը ձգել մեր ներաշխարհին վրայ: Գիտնականներ չափողած են գտնել մարմնի եւ հոգեկան առողջութեան միջեւ կապին միջամտող այլ գործօն մը՝ միջավայրը:

Յայտնաբերուած են միջավայրի ազդանշաններ, ուսման մակարդակը, ընտանիքի եւ առողջութեան միջեւ կապերը: Այս գծով ուսումնասիրութիւնները կը շարունակուին եւ գիտնականներ կը յայտնաբերեն հետաքրքրական սակայն երբեմն մտահոգիչ կապեր

միջավայրի, հոգեբանութեան եւ ընդհանուր առմամբ առողջութեան միջեւ:

Հետաքրքրական է, որ ամերիկացի գիտնականներ հիմնուելով իրենց նորագոյն ուսումնասիրութիւններուն վրայ, յայտարարած են գիշերուան աշխատանքի եւ ձուլանի քաղցկեղի միջեւ կապի հաւանականութեան մասին: Երեք հազար կիներու մասնակցութեամբ ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ, թէ գիշերուան մինչեւ առաւուս աշխատող կիներու մօտ 49 առ հարիւր համեմատութեամբ կը բարձրանայ ձուլանի մեղմ քաղցկեղէ տառապելու հաւանականութիւնը: Այս երեւոյթը կարելի է բացատրել այն իրողութեամբ, որ գիշերուան անքնութեան ժամանակ կը պակսի մարմնի մեկայինին հորմոնի քանակը, որ կրնայ յառաջացնել ձուլանի քաղցկեղ: Նախապէս, գիտնականներ յաջողած են կապ մը գտնել մեկայինինի սակաւութեան եւ կուրծքի քաղցկեղի միջեւ:

ՍԱՀԱԿԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՅԻՍ 10-Ի ԱՒԱՆԴԱԿԱՆ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻԻ

ԾՆՈՐՀԱՆԴԷՍ ՆՈՒԻՐՈՒԱԾ՝

«ՅՈՒՇԱՐՁԱՆ ՈՒՍՈՒՑՁԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈԶԵԱՆԻ» ԳԻՐՔԻՆ

Կազմակերպութեամբ՝

Սահակեան Սանուց Միութեան

Գիրքը կը ներկայացնէ՝

ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

(Գրող եւ խմբագիր)

**Ուրբաթ, 10 Մայիս, 2013
Երեկոյեան ժամը 7:00ից**

**Կլեմտէյի Հանրային Գրադարանին մէջ
222 East Harvard Street, Glendale CA 91205**

Մուտքը Ազատ

Հիւրասիրութիւն



ԱՊՐԻԼ 24

Գարունն է նորից: Հայոց աշխարհում մի նոր գոտարթնոց: Եւ այդ սքանչելի կամարի մէջ մեր խորունկ վիշտն է ամփոփուում, նաեւ: Նորից շրջուում ենք ներսից դէպի դուրս՝ բոլորով, կանչելու, խոկումի, ընդվզումի, բայց ոչ երբեք լռելու:

Հազար ու մէկ խնդիր ունեցող աշխարհը կարծես դանդաղ, բայց հաստատուն ընկալումն ունի՝ իր դէմ կատարուած այդ մեծ ոճիրին:

Արդարութիւն իրօք խոսով է, վիրաւոր, բայց այն չի կարող մեռնել:

Մենք չենք ազատուում ցեղասպանութեան սեւ պատուհանից: Եւ այդ ուրուականից հետապնդողի ծանր ու խուլ մոռնոցով, փորձում ենք բացատրել անընդգրկելին... Այդ ինչպէ՞ս եղաւ հարցը խեղդում է մեզ, անկարող անում: Գարեգին Նժդեհը գրում է. «Ես ճանաչում եմ քեզ, չար բախտի հետ պայքարի մտած անընկճելի ժողովուրդ, խորապէս հաւատում քո մեծ երջանիկ ապագային եւ կարօտով, երկիւղածօրէն համբուրում աշխատանքի մէջ կոշտացած ու սրբացած քո ձեռքը, քո հայրենաշէն ձեռքը»:

Եւ վերածնունդ մեր ճիգի, գիտակցութեան գումարով բրոնզանում ենք՝ որպէս յուշարձան, պին այս աշխարհում, ունայն աշխարհում... Բայց եւ ծաղկի ու մանկան, յոյսի, հաւատի, չնուստանալու, մարդաշինութեան, խօսքի, երգելու, մեռնելուց առաջ մէկ հատ ժպտալու՝ այս հրաշալի, բայց դժուար կեանքում:

ՍՈՒՐՃԸ ԿՐՆԱՅ ԲԱՐԵԼԱԻԵԼ ԻՆՔՆԱՇԱՐԺ ՎԱՐԵԼՈՒ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՒ ԿԸ ՆՈՒԱԶԵՑՆԷ ԻՆՔՆԱՇԱՐԺԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Աւստրալացի հետազօտներ կը յայտնաբերեն, որ երկար տեւողութեամբ ինքնաշարժ վարող անձերու մօտ կրնայ նուազիւ արկածներու հաւանականութիւնը, երբ անոնք ինքնաշարժ վարած ժամանակ սուրճ կամ այլ քաֆէին պարունակող խմիչք սպառեն:

Ըստ British Medical Journal ամսաթերթին, քաֆէյինը կ'աշխուժացնէ ջղալին դրութիւնը, որ պատասխանատու է արթուն եւ պատրաստ վիճակին: Արթունութիւնը եւ արագ որոշում առնելը կարեւոր յատկութիւններ են վարորդի մը համար: Սակայն, կարեւոր է անդրադառնալ, որ սուրճը կամ քաֆէինը չեն փոխարիներ քնանալու օգուտները, ինչպէս կը շեշտեն մասնագէտները:

Այս ուսումնասիրութեան մաս կազմած են աւելի քան հազար վարորդներ: Ուսումնասիրութեան ընթացքին, սուրճ պարունակող մասնակիցներուն մօտ 63 առ հարիւր համեմատութեամբ կը նուազի արկած ունենալու հաւանականութիւնը, սակայն երբ անոնց օգտագործած ինքնաշարժները նորոգուած չեն, այս հաւանականութիւնը կը բարձրանայ 81 առ հարիւրի: Հետեւաբար, մի վստահիք սուրճին: Լաւ քնացէք եւ միշտ նորոգեցէք ձեր ինքնաշարժները:

Արեւելքի իմաստուն պոէտը՝ Տագորը նայում է աչքերիս մէջ, թանձր ձայնով կանչում. «Եթէ դու թափառում ես տարօրինակ կածաններով ու գոտարձանում ցանցաւ, անմիտ բաներով գործ չունես երգի եւ խելքի հետ»...

Եւ յուսահատ, քառսի, շփոթի միջից շարունակում է դառնացած. «Դէն եմ շարտում հպարտութիւնս, իմ գիտութեամբ ու կարողութեամբ դատելու, որն է լաւը, որը՞ վատ ես կը փշրեմ իմ յուշերի արտօսալի անօթը, շող տալով արցունքներիս վերջին կաթիլը»... Պատասխանս՝ Եղեռնի զոհերի ապրելու սպանուած իրաւունքն է, որ հազարապատից ծլրաձակել է ամէն մէկին մէջ, եւ դա կրում ենք՝ ուզենք, թէ չուզենք:

Յեղասպանութիւնը մոռացումից, ժամանակից, տարածութիւնից դուրս է, մարդու ընդերքում, խորքում:

Նոյնիսկ արդարի յաղթելու դէպքում, կամ լեռնաշխարհի ամբողջացումով, պէտք է մենք յիշենք:

Այսօր աշխարհի տարբեր կողմերում կառուցուում են յուշարձաններ, յուշելի բաներ, որպէսզի մարդը, միշտ յիշի... իրեն:

Բարձրաձայն ենք նաեւ, մեր ներքին թշնամին չկամութիւնը, անմիաբանութիւնը միշտ է խանգարել, նոյնիսկ կործանել: Այսօր, օրինակ ո՞վ է յիշում Կլենտէյլի յուշարձանի կառուցման անյաջողութիւնը, գրեթէ ոչ ոք:

Այդ ծրագրի ձախողումը նաեւ դաս է...

Յայտնեն նաեւ 2013 թ. Ապրիլ 24ին, առաւօտ 10:00ին հիմնադրուում է Փասատինայի Եղեռնի զոհերի յուշարձանը (Memorial Park, Walnut եւ Raymond փողոցներու խաչմերուկում): Այն կազմակերպել է Փասատինայի քաղաքապետարանը, համագաղութային հայ մարմինը եւ ժողովրդի ներկայացուցիչները: Մենք չենք ուզում, որ կրկնուի Կլենտէյլի ծրագրի ձախողումը, չնայած այդ նոյն, ներքին թշնամին ջանք չի խնայում այդ ծրագրերը օտարելու: Մեր յստակ կեցուածքով, որ հիմնուած է իրաւական դաշտի վրայ, պէտք է բոլորենք այս գործը, ընդառաջ Մեծ



Եղեռնի 100 ամեակին: Հրաւիրուում են բոլորը, անկախ սեռից, տարիքից, ազգութիւնից, դաւանանքից եւ կուսակցութիւնից:



ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ
սիրով կը հրաւիրէ ձեզ

Դասախօսական երեկոյի մը
Պիտի դասախօսէ
Փրօֆ. Կարապետ Մումճեան
«Գրիգոր Զօհրապ քաղաքական մարդը» (հայերէն)

Վաւերագրական Տեսաժապաւէնի ցուցադրութիւն
I HATE DOGS
Հեղինակ եւ արտադրութիւն՝ Peđa Holmquist իւր Սուզան Խարտալեանի

Պիտի բանախօսէ
Իւմիդ Գուրդ
Հայոց Յեղասպանութեան Ուսումնասիրութեան պատմագիտութեան թեկնածու՝ Գլարք Համալսարանէն
«Ինչ պատահեցաւ Այնթապի հայերուն: Հայոցտեղահանութեան և ցեղասպանութեան ամբողջյետագիծը»

Երեքշաբթի, Ապրիլ 23, 2013 ժամը 7:00ին
Պոլսահայ Միութեան «Գրիգոր եւ Աւետ Քիրքչիօղլու» սրահին մէջ 19726 Sherman Way, Winnetka, CA 91306

Նոյն օրը պիտի կատարուի մտմավառութիւն, մեր մէկուկէս միլիոն նահատակներուն հոգւոյն

Մուտքը ազատ հիւրասիրութիւն

THE ORGANIZATION OF ISTANBUL ARMENIANS
Cordially invites you to a lecture night
With Prof. Garabet Momdjian
“Krikor Zohrab the politician” (Armenian)

Screening of a documentary film by Peđa Holmquist and Suzanne Khardalian

I HATE DOGS
A lecture will be delivered by
Umit Kurt
Scholar candidate of the Armenian Genocide Studies at Clark University.
What happened to Aintabzy Armenians?
The Whole Trajectory of Armenian Deportation and Genocide in Aintab
Tuesday, April 23, 2013 at 7.00 PM
At OIA “Krikor & Aved Kurkcuglu Hall” 19726 Sherman Way Winnetka, CA 91306

On the same day, a Candlelight Vigil will be held in memory of our 1.5 million martyrs

Free Admission Reception

ՄԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՊԱՏՍՈՒԹԻՒՆ

Շաբաթական 6-էն

կանները համակարծիք չեն դրա գտնուելու վայրի առնչութեամբ: Մի մասը հակուած է, որ Նոյին հողին են յանձնել հէնց Նախիջեւանում, միւս մասը որպէս յուղարկաւորման վայր նշում է Թուրքիայի պիզըն քաղաքը՝ Շիրնակի գաւա-

ռում, իսկ որոշ հետազոտողներ էլ՝ Իրաքի Նաջաֆ քաղաքում իմամ Ալի մզկիթը: Այնուհանդերձ, վերոնշեալ բացիկը՝ շնորհիւ վալտեր Արամեանի, տարածում էր գտել հայերի եւ ռուսներին շրջանում՝ ընկալուելով որպէս Նոյի գերեզմանի պատկերով միակ լուսանկարը:

ԹՈՒՐԻԱՅԻ ՊԱՏՍՈՒԹԻՒՆԸ

Շաբաթական 6-էն

խական կուսակցութիւնների հիացմունքով եւ միաժամանակ ատելութեամբ լի փոխարարներով թիւններն արժանացել են պատշաճ ուշադրութեան: Հեղինակը մատնանշում է Թուրքական ազգայնական շարժումները եւ Անատոլիայի ու Պալքանների քրիստոնէական յեղափոխական կոմիտէներին բաժանող անջրպետի գաղափարախօսական պատճառները. առաջիններն ազդուած էին եւրոպացի ազգայնականների գաղափարախօսու-

թիւններից, իսկ երկրորդները (հայեր, բուլղարներ, մակեդոնացիներ) եւրոպայի սոցիալիստական եւ մարքսիստական առաջադիմական մտքի ջատագովներն էին:

Գիրքը ուսուցողական հետազոտութիւն է եւ նախատեսուած է լայն հասարակացութեան համար: Հեղինակը հանդէս է գալիս Թուրքիայում իսկական ժողովրդավարութեան հաստատման օգտին, իսկ դա ենթադրում է էթնիկական, կրօնական եւ քաղաքակրթական իրաւունքների ճանաչում:

ՊՈՒԶԻԱՅԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓԱՈՍՍՈՒ

Շաբաթական 8-էն

կաճորում եւ այլուր տեղի կ'ունենան ընթերցողական հանդիպումներ, թարգմանական գրքերի շնորհանդէսներ, քննարկումներ: Արդէն լոյս է տեսել փառատօնի հայ եւ օտարազգի մասնակիցների ստեղծագործութիւնների երկրեզուեայ (անգլերէն եւ հայերէն) անթոլոգիան: «Նոր գիրք» գրախանութի հարեւանութեամբ կը հիմնուի Պուէզիայի պուրակ, որտեղ մասնակից երկրների պատուիրակները մէկական գնդաձեւ ակացիա կը տնկեն: Ապագայում, եթէ նոր երկրներ ներգրաւեն, պուրակը կը համալրուի նոր ծառերով:

Յամենայն դէպս, իմ փորձառութիւնը յուշում է, որ ոչ մի հանրագուտ գաղափար գետնին չի մնայ, եթէ յամառութիւն եւ կամք դրսեւորելով անձնատուր չլինես դժուարութիւններին: Արդէն քննարկում ենք յաջորդ փառատօնի թեման՝ նուիրում Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցին: Վստահ եմ, որ անպայման կը կազմակերպենք:

- Աւանդական միջոցառումներից բացի, Գրողների միութիւնը ինչ է ծրագրել ընթացիկ տարում:
- Ծրագրերը շատ-շատ են, մի գգալի մասն էլ՝ միջազգային ձեւաչափով: Թերթի սուղ էջերը ինչպէս չեն միայն մէկը՝ Յունիսի վերջին տեղի կ'ունենայ Օտարազգի հայ գրողների 5-րդ համաժողովը:
- Շնորհակալութիւն:

- Այսինքն՝ փառատօնն աւանդակա՞ն է դառնալու:
- Կ'ապրենք, կը տեսնենք:

«ՍՈՒՐԻԱՅԱՅԵՐ՝ ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅԵՐՈՒ ՏՈՒՆԵՐՈՒՆ ՄԵԶ»

Շաբաթական 7-էն

թեան, պէտքի, եւ անտէրութեան դառն բաժակը ըմպեն...: Լիբանանահայերը իրենց այս սրտբաց ընդունելութեամբ լաւ դաս մը, աւելի ճիշդը ըսելով, զանազան դասեր կու տան այն շատ մը լիբանանցիներուն, որոնք իրենց դռներն ու սրտերը կ'ուզեն փակ պահել՝ սուրիացի զանազան այլ համայնքներու պատկանող գաղթականներուն դիմաց:

Պուրճ Համուտի մէջ հայեր կ'ըսեն՝ մեր սուրիահայ եղբայրները բարի եկած են Լիբանան, որովհետեւ անոնք գաղթականներ չեն,

այլ՝ մէկ ժողովուրդի եւ մէկ երկրի քաղաքացիները:

Ամօթ է անոնց գաղթականի պիտակը փակցնել: Լիբանանահայութեան պատուարնդրութիւնը չ'արտօներ, որ աշխարհի վրայ գտնուող ոեւէ հայ անտէր մնայ ու անպատուի... Սուրիահայերը գրկաբաց ընդունող լիբանանահայերուն կեցուածքը որպէս օրինակ պէտք է ծառայէ լիբանանեան բոլոր կողմերուն եւ լաւ դաս մը տայ անոնց, որոնք ազգասիրութիւն կը քարոզեն եւ նախանձախնդրութիւն կը ձեւացնեն իրենց համայնքակիցներուն հանդէպ»:

ՓՐՈՖ. ՏԱՆԸՏ ՄԻԼՐ

Շաբաթական 15-էն

եան քոյրեր, UCLA համալսարանի դոկտորայի թեկնածուներ, որոնք հրաւիրուած են Հայկական Յեղապանութեան համալսարանական համագումարի մը Պոլիսի մէջ, ուսանող ներկաները շատ մօտ հետաքրքրութիւն ցոյց տուած են եւ յիշած են թէ ոմանց մեծ ծնողները եղած են հայեր եւ կ'ոգեկոչեն Ապրիլ 24ը:

Փրոֆ. Միլըր 2003ին կը հրաւիրուի համագումարի մը Թուրքիոյ մէջ «Միջազգային Պատմական Միութեան» մը կողմէ, որոնք ընդունելով ուսումնասիրութիւնը 800 ներկաներով արտայայտուած են թէ «Պէտք է փոխուինք» որովհետեւ ներկաներուն մեծամասնութիւնը Թուրք ուսանողներ բացայայտած են թէ իրենք կէս հայեր են: Մեծապէս գնահատելի է փրոֆ. Միլըրի մասնագիտական եւ հայա-

շունչ դասախօսութիւնը եւ շատ աւելի գնահատելի է եւ հպարտութեամբ յիշատակելի իր հայ տիկնոջ Լորնա Դուրեան Միլըրի մասնակցութիւնը եւ իրենց անխոնջ աշխատանքները միասին եւ բոլոր հայերուս կը ներշնչեն իրենց սէրը հայ ժողովուրդին, կոչելով իրենց գաւակները Արփի՝ UCLA դոկտորայի թեկնածու ընկերաբանութեան եւ Շանթ իրաւաբան Seattle եւ մեծ հաճոյքով կ'իմանանք թէ իրենց 4 թոռներու միջին անունները հայկական են:

Պէտք է յիշել փրոֆ. Միլըրի անհամար հրատարակութիւնները, որպէս հեղինակ եւ խմբագիր 9 գիրքերու:

Դաստիարակչական յանձնախումբը իր խորին շնորհակալութիւնները կը յայտնէ յարգելի փրոֆ. Տանըր Միլըրին եւ տիկ. Լորնա Դուրեան Միլըրին եւ կը մաղթէ նորանոր յաջողութիւններ:

Զեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Massis2@earthlink.net

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
 SERVING BATON ROUGE SINCE 1979

 **Հայ news am**

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԵԶ (200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ
(626) 797-7680

VISIT YOUR APP STORE AND DOWNLOAD FREE

 +  = 

THE FIRST ARMENIAN NEWS OUTLET APP AVAILABLE FOR ALL YOUR DEVICES



In commemoration of the
98th ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE
and organized by
Gaidz Youth Organization

ՀՍԿՈՒՄ/ՔԱՅԼԱՐԾԱԻ
CANDLELIGHT VIGIL/WALK

March to Remember

Tuesday, April 23, 2013
Երեքշաբթի, Ապրիլ 23, 2013

Walk from
Pasadena City Hall to
St. Gregory Armenian Church for
Requiem Service

- 6:00 PM Gather/Parking at Pasadena City Hall, 100 N. Garfield Avenue, Pasadena, CA 91101
- 7:00 PM Official walk (2.6 miles distance) begins
- 9:00 PM Requiem services (Hokehankisd) and program conclusion at St. Gregory Armenian Church, Pasadena
(Transportation back to the City Hall parking area at the conclusion of the event is provided by the organizers)

